

ՀԱՂՈՐԴԱԿՑԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԲԱՂԱՂԻՐՏԱՐՐԵՐԸ

ԱՆԱՀԻՏ ԱՂԻԼԽԱՆՑԱՆ

Հաղորդակցումը բարդ գործընթաց է, և պատահական չէ, որ այն ուսումնասիրության նյութ է դարձել սոցիոլոգների, փիլիսոփաների, հոգեվեգվաբանների, ինչպես նաև հանրալեզվաբանությամբ զբաղվողների համար: Մասնագետներին հետաքրքրում են խոսքի հաղորդումը և ընկալումը, խոսող-խոսակից հարաբերությունների ազդեցությունը խոսքի վրա, այն իրադրությունը, որում ձևավորվում է խոսքը, այն պատճառները, որոնք դժվարություններ են ստեղծում հաղորդակցման համար, այն պայմանները, որոնք նպաստում են հաղորդակցման արդյունավետությունը բարձրացնելուն:

Ըստ սոցիոլոգների՝ մարդկանց ժամանակի մեծ մասը ծախսվում է շփման վրա: Հաղորդակցվում ենք բանավոր և գրավոր, խոսքով և առանց խոսքի: Մենք շփվում ենք տանը, ընկերական շրջապատում, աշխատավայրում, փողոցում, խանութում, հասարակական տարբեր վայրերում: Այսինքն՝ մարդու կյանքը առանց շփման, հաղորդակցվելու հնարավոր չէ պատկերացնել: Շփումը գործընթաց է, նպատակին գիտակցաբար հասնելու միջոց (հնարավոր է նաև պատահական կամ առանց նպատակի շփում, ասենք՝ խնջույքի սեղանի շուրջը): Իսկ շփում-հաղորդակցումը անհնար է պատկերացնել առանց լեզվի կիրարկման: Լեզուն կենդանի օրգանիզմ է. այն ենթարկվում է հասարակության զարգացման պահանջներին: Քանի որ լեզուն գործիք է հասարակության տարբեր շերտերի համար, ուստի դրա գործածությունը, հաղորդակցական տարբեր իրավիճակներից ու հասարակական կյանքի տարբեր ոլորտներից կախված, խիստ տարաբնույթ է: Լեզվի և հասարակության փոխազդեցությունը դրսևորվում է տարբեր հարաբերություններում՝ ա) հասարակական տարբեր խմբերում, բ) գրական լեզվի և բարբառների փոխհարաբերություններում, գ) լեզվի և մշակույթի փոխազդեցություններում, դ) գործառական ոճերում, ե) խոսքային էթիկետի արտահայտման եղանակներում ևն: Իրականում հաղորդակցման հիմքում ընկած են խոսողի թե՛ հասարակական դերը, թե՛ այդ դերի ազդեցությունը խոսքի վրա: Կարելի է ասել, որ այստեղ կարևորվում է այն, թե ինչպես են հասարակական տարբեր խմբեր գործածում այդ լեզուն: Եվ քանի որ լեզուն հասարակական երևույթ է, ուրեմն հաղորդակցումը ևս հասարակական բնույթ ունի: Այս ամենով պայմանավորված՝ հաղորդակցական իրավիճակը կարելի է դիտարկել՝ ա) լեզվի և խոսքի փոխազդեցություն, բ) որպես հասարակական երևույթ, գ) հասարակության կողմից ընդուն-

ված և հաստատված խոսքային վարքականոն: Խոսքային վարքականոնի օգնությամբ են տեղի ունենում հաղորդակցվողների փոխազդեցությունը և ընդհանրապես շփումը հասարակական տարբեր խմբերում: Շփումը կարող է տեղի ունենալ ժամանակի և տարածության մեջ: Հիմնական շփումը պայմանավորված է իրավիճակով, այսինքն՝ վերջինս է թելադրում շփման եղանակները, նպատակները: Իրավիճակն ազդում է նաև խոսքի ընտրության վրա: Նույն անձը հաղորդակցման տարբեր իրավիճակներում կարող է փոխել իր խոսքի բնույթը՝ խնդրանքից հրաման, արդարացումից սպառնալիք ևն:

Գրագետ հաղորդակցման համար անհրաժեշտ է տիրապետել հաղորդակցման իրավիճակի բաղադրատարրերին: Դրանք են՝ 1) տեղեկույթի հաղորդողը և ընդունողը (ո՛վ - ո՛ւմ), 2) շփման բնույթը (պատժողական, ընկերական, մտերմական, չեզոք), 3) խոսքի առարկան-թեման, 4) նպատակը, 5) շփման կողմ՝ գրական լեզու, բարբառ, երկլեզվյան հաղորդակցում, արտալեզվական գործոններ ևն, 6) շփման եղանակները՝ գրավոր-բանավոր (գրավոր խոսքը ուղղված է մի դեպքում կոնկրետ մարդու՝ նամակ, SMS հաղորդագրություն, այլ դեպքում՝ ընթերցողին՝ գիրք, հոդված, մամուլ ևն), տարածական (սկայի, Wi-Fi հաղորդագրություն), լսողական, տեսալսողական (հեռախոսային խոսակցություն, հեռուստահաղորդումներ), ոչ խոսքային միջոցներ (ժեստեր, դիմախաղ), 7) հաղորդակցման պայմանները՝ ա) տեղը (քաղաք, գյուղ, աշխատավայր, ընտանիք և այլ վայրեր), բ) ժամանակը (առավոտյան, երեկոյան, ամառ, ձմեռ ևն), 8) ազգային առանձնահատկություններ: Հաղորդակցման յուրաքանչյուր բաղադրիչ կարող է ազդել խոսքային գործընթացի և արդյունքի վրա: Կոնկրետ խոսքը կարող է ստեղծվել և իրացվել հաղորդակցման որոշակի իրավիճակում: Ուստի իրավիճակային հաղորդակցումը բնութագրվում է այսպես. այն հաղորդակցման կոնկրետ իրադրություն է, որտեղ կան խոսողը և խոսակիցը (ո՛վ- ո՛ւմ), որոնք ունեն որոշակի նպատակ, հաղորդակցման թեմա, փոխանակում են տեղեկույթ՝ օգտվելով հաղորդակցման ընդհանուր կողմից, և գտնվում են որոշակի պայմաններում¹: Շփվելու-հաղորդակցվելու անհրաժեշտությունը առաջանում է այն ժամանակ, երբ հաղորդակցվողներից մեկնումեկը արտահայտվելու ցանկություն է ունենում (գրավոր կամ բանավոր): Այդ ցանկությունը բացատրվում է նրանով, որ շփումն անխաձեռնողը ուզում է հաղորդել իր մտահոգությունները ինչ-որ հարցի կապակցությամբ, ազդել կամ հարցում անել, ստանալ տեղեկություն, հասնել ինչ-որ նպատակի ևն: Այնուամենայնիվ, կարող ենք ասել, որ շփումը միմյանց հետ հաղորդակցվողների փոխազդեցություն է: Յուրաքանչյուր բաղադրիչ յուրովի է ազդում հաղորդակցական իրավիճակի վրա, և ըստ այդ բաղադրատարրերի իրացման՝ հաղորդակ-

¹ Ст' у Ипполитова Н. А., Князева О. Ю., Савова М. Р. Русский язык и культура речи. М., 2007, էջ 141:

ցումը կարող է հաջողություն ունենալ կամ չունենալ և կամ պարզապես մտնել փակուղի: Հաղորդակցման իրավիճակում տեղի է ունենում տեղեկության հաղորդում և ընդունում որևէ կողմի միջոցով: **Կողը** իր ամբողջ նշանակությամբ հաղորդակցման միջոցն է²: Հայերի համար հաղորդակցման կողը հայերենն է՝ իր բոլոր տարբերակներով: Անշուշտ, հասարակական տարբեր կարգավիճակ ունեցող մարդկանց շփման կողը տարբերվում է. բարբառակիրների, քաղաքաբնականների, բանտարկյալների, վարորդների, վաճառականների, դպրոցականների, ուսանողների, բժիշկների ևն հաղորդակցման կողերը տարբերվում են միմյանցից՝ բարբառ, ժարգոն, գրական հայերեն, մասնագիտական բառեր ևն: Հաղորդակցման հիմքում ընկած է մարդկանց հասարակական դերը, որը, անշուշտ, իր ազդեցությունն է թողնում հաղորդակցման գործընթացի վրա: Յուրաքանչյուր մարդ մեկ օրվա ընթացքում կատարում է մի քանի հասարակական դերեր՝ մշտական և փոփոխական, որոնք թելադրում են խոսքային բազմազան կառույցների գործադրումներ: Օրինակ՝ առավոտյան կինը ընտանիքում և՛ մայր է, և՛ ամուսին, և՛ հնարավոր է աղջիկ կամ հարս (մշտական հասարակական դեր): Երեխայի հետ խոսելիս նրա մայրական դերը արտահայտվում է նաև խոսքում՝ *«Դե, շուտ լվացվի՛ր, նախաճաշդ կե՛ր, առանց ուտելու՛ չգնաս, թե՛ չէ՛ դպրոցում շուտ կհոգնես, անձրևանոցդ չմոռանաս՝ դրսում անձրև է»*: Ամուսնուն՝ *«Մի՛ անհանգստացիր, ամեն ինչ լավ է լինելու, նոր օր է սկսվում»*: Ծնողին՝ *«Մա՛մ ջան, խնդրում եմ, ոչ մի գործ չանե՛ս, հանգստացի՛ր, դեղերդ ժամանակին կխմես»*: Ինչպես տեսնում ենք, ընտանիքում նույն մարդու խոսքը տարաբնույթ է՝ հրամայականից հանգստացնող, պահանջող: Այդ նույն կինը փողոցում է, ուշանում է աշխատանքից և հայտնվում է հաճախորդի կարգավիճակում (փոփոխական): Փոխվում է խոսքի բնույթը. նա հայտնվում է խնդրողի դերում. փոխադրամիջոցում՝ *«Դրամը կփոխանցե՛ք»*, *«Թո՛ւյլ կտաք առաջ անցնել»* ևն: Նա աշխատավայրում կարող է լինել տնօրենուհի, գործընկեր: Աշխատանքից հետո հայտնվել է վարսավիրանոցում կամ խանութում հաճախորդի դերով: Բնականաբար, փոխվում է նրա հասարակական դերը, և իրադրությանը համապատասխան պետք է ընտրվեն խոսքային համարժեք միավորներ: Շփման, հաղորդակցման նպատակից, ժամանակից, տեղից ելնելով՝ խոսքի բնույթը փոխվում է: Դա պայմանավորված է խոսող-խոսակիցների հասարակական կարգավիճակով, որն իր անմիջական ազդեցությունն է թողնում հաղորդակցման ընթացքի վրա: Հետևաբար ամեն մարդ գործածում է այնպիսի լեզվատարբեր, որոնք «ինքն է ստացել դրսից և ինչ որ իր մեջ սերտորեն զուգորդված է լեզվական նման ձևերի հետ»³:

² Տե՛ս **Беликов В. И., Крысин Л. П.** Социолнгвистика. Учебник для бакалавриата и магистратуры. М., 2016, էջ 18:

³ **Մ. Աբեղյան**, Երկեր, հ. 9, Եր., 1974, էջ 37:

Հաղորդակցման ժամանակ խոսողը կատարում է մշտական հասարակական դեր՝ ամուսին, կին, ծնող, բժիշկ, դասախոս, վարորդ, իրավաբան, եղբայր, քույր են, և փոփոխական իրադրային՝ հաճախորդ, հյուր, այցելու, հիվանդ, հանգստացող, զբոսաշրջիկ են: Շփման մեջ մտնելով խոսողը պետք է կողմնորոշվի խոսակցի հասարակական դերով: «Հասարակական յուրաքանչյուր դեր լեզվում առանձնահատուկ նշանակություն ունի»⁴, - նշում է ռուս լեզվաբան Կրիսինը: Հաղորդակցման կարևոր բաղադրիչներից է խոսող-խոսակցի փոխհարաբերությունը, որը բնութագրվում է այսպես. հաղորդակցական իրադրության մեջ **հավասար-անհավասար, ծանոթ-անծանոթ, մտերմական-հարազատական, չեզոք** հարաբերություններ: Հաղորդակցական իրադրության մեջ **այդ** հարաբերություններն արտահայտվում են **Դու/Ղուք** դիմելաձևերի մեջ: Հաղորդակցական իրավիճակն է թելադրում **Դու/Ղուք** դիմելաձևերի գործածությունը. այն հայերենում առավելապես պայմանավորված է պաշտոնական-ոչ պաշտոնական իրադրությամբ:

Բացի այս, հաղորդակցական իրավիճակում մեծ դեր ունի այն, թե հաղորդակցվողները հասարակական որ խմբին են պատկանում: Հասարակական տարբեր խմբերի կողմից լեզվի գործածության ուսումնասիրությանը անդրադարձել է նաև Ա. Այտրնյանը. «Ազգի մը մեջ խորհողն ու խոսողը մէկ անհատ մը չէ, եւ ոչ ամէնքը միեւնոյն կարգի եւ վիճակի մարդիկ են... Կան Ազատաց լեզու, Ուսումնական կամ Գիտնոց լեզու, Հասարակ կամ Ընտանեկան լեզու, Գոեհիկ կամ Գեղջկաց լեզու եւ այլն»⁵: Այսինքն՝ մարդու հասարակական կարգավիճակը, հասարակական այս կամ այն խմբին պատկանելը անդրադառնում են լեզվական միջոցների գործածության վրա, առաջ բերում լեզվական որակների փոփոխություն:

Հասարակական խմբերը մի քանիսն են.

ա) **Ըստ տարիքի** երեխաներ, երիտասարդություն, միջին տարիք, մեծահասակներ: Վերջիններս ավելի ավանդապահ են և հնարավորինս պահպանում են խոսքային էթիկետի վարքականոնը, երիտասարդները հակված են դեպի «նորը»՝ *օքեյ, հայ, բայ, մերսի* են: Դպրոցականների խոսքը համեմված է ժարգոնով՝ «*Էրեխե՛ք, մինչև վաղը՝ Յ, Պակա*» են: Նոր սերունդը ընդունում է և՛ նորը, և՛ հինը, մանավանդ երբ երկու ձևերն էլ գտնվում են լեզվական գործածության նույն հարթակում: Նոր սերնդի ներկայացուցիչների մի մասը լեզվի զարգացումը բոլորովին այլ ուղղությամբ է տանում. սկսում է գործածել այնպիսի բառամիավորներ, որոնք անսովոր են, գուցե սխալ, բայց ժամանակի ընթացքում կարող են դառնալ կիրառելի և ազդել լեզվի որակային առանձնահատկությունների վրա: «Խոսքային գործառնությունը իրագործելի և հնարավոր է փոխհաղորդակցման դեպքում, որը տեղի է ունենում ինչ-որ տեղ, ինչ-որ ժա-

⁴ Крысин Л. П. Речевое общение и социальные роли говорящих. М., 1976, с. 44.

⁵ Ա. Այտրնյան, Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, Եր., 1987, էջ 34:

մանակներում: Ահա թե ինչու «Ես-դու-այստեղ-հիմա» կողմնորոշիչ-ցուցիչները (կոորդինատները) բառաքերականական, ոճագեղագիտական միջոցների համապատասխան ընտրություն են թելադրում լեզվական նորաձևության (մոդայի) և ճաշակի շրջանակներում»⁶:

բ) **Ըստ մասնագիտական զբաղվածության**՝ գիտությամբ զբաղվողներ, մտավորականներ (գրողներ, ճարտարապետներ, բանասերներ, բժիշկներ, բանկային ոլորտի աշխատողներ են), քաղաքական գործիչներ, դիվանագետներ, վարորդներ, արհեստավորներ, վաճառողներ են: Մասնագիտությունն իր ազդեցությունն է թողնում մարդկանց խոսքի վրա. նույնիսկ խոսքի տոնայնությունն է տարբերվում: Օրինակ բանջարեղեն վաճառողը գնորդի հետ խոսում է այսպես.

- *Շատ թարմ ապրանք ա, էկալագիչեսկի չիստի, քիմիական նյութ տված չի, քեզ կհիշն 400 դրամով կհաշվես, արի առ, չես փոշմանի, ամեն օր ես ստեղ եմ:*

Տարբեր մասնագիտությունների տեղ մարդկանց խոսքը տարբերվում է նաև ոճական առումով: Գիտական ոլորտի մարդկանց խոսքը ունի վերլուծական, տրամաբանական բնույթ: Զինվորականների խոսքը ավելի կտրուկ է, չոր, ուսուցչի և դասախոսի խոսքը խրատական – դաստիարակչական բնույթ ունի: Երբեմն լսում ես այսպիսի արտահայտություններ՝ *Խոսում ես դասախոսի կամ ուսուցչի պես, Գոռում ես շուկայի վաճառողի պես, Հրամայական տոնդ փոխի՛ր* են: Խոսքային ցանկացած իրավիճակում մասնագիտական խոսելաոճը նկատելի է:

գ) **Ըստ սեռային տարբերության**՝ կին - տղամարդ: Կան իրադրություններ, որոնք հարգալից վերաբերմունք են թելադրում կնոջ նկատմամբ: Փորձը ցույց է տալիս, որ տղամարդիկ ավելի երկար են զրուցում (խմբային քննարկում)՝ պարզելու, թե ով ավելի է տեղեկացված քաղաքական անցուդարձին, նրանց համար կարևորվում է գիտելիքների ու իմացության ցուցադրումը: Կանայք ավելի զգուշավոր են. նրանք այնպիսի լեզվատարրեր են ընտրում, որոնք նպաստում են փոխըմբռնմանը:

դ) **Ըստ բնակության վայրի**՝ քաղաքաբնակ թե՛ գյուղաբնակ: Գյուղաբնակների խոսքը կարող է կրել բարբառի ազդեցությունը: Օրինակ՝ *-Ախչի՛, հերդ տանն ա՞ (տղա),- խոսում է՝ ձեռքը հենած դնչին:*

-*Չէ՛: Ի՛նչ ես խլշկոտում: Ասեցի տանը չի:*

-*Բա վերդի՛ յա:*

-*Քրնացել ա քոլը, վեր մի հաչա կտրի, պիրի չանիդ տակ տընի, վեր չընգնի:*

Դեռևս իր ժամանակին մեծ լեզվաբան Մ. Արեղյանը նշում էր, «Խոսելու եղանակի վրա մեծ ազդեցություն ունին նաև բնական հատկությունը, խոսողի սեռը, տարիքը, սովորությունը, վայրկյանի հոգեկան վիճակը և այլն: Բարբառների մեջ ևս խոսվածքի եղանակները տարբեր

⁶ **Ջ. Աղաջանյան**, Հաղորդակցական իրավիճակ և էթիկետային բանաձևերի հաջորդականության կարգը, «Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն», Եր., № 1(25), 2018, էջ 66:

են. ուստի և ո՛ր տեղացի լինելն ևս ազդում է խոսքի եղանակի վրա»⁷: Սակայն շատ բան է փոխվել արեղյանական ժամանակաշրջանից. ժամանակակից հասարակության մեջ, կարելի է ասել, գյուղաբնակ երիտասարդների խոսքը քիչ է տարբերվում քաղաքաբնակների խոսքից: Դա բարբառների պասիվացման և ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների առկայության հետևանք է:

Այստեղից հետևություն, որ Մ.Աբեղյանը ևս անդրադարձել է հաղորդակցման ժամանակ խոսքի ձևավորմանը՝ շեշտը դնելով լեզու և խոսք փոխհարաբերությունը, «անհատական լեզուների» դերին, որոնք որոշակիորեն փոխում են լեզվագործածության ընթացքը:

Բերենք խոսքային իրադրության օրինակ, որը պատկերացում կտա հաղորդակցական իրավիճակի բաղադրատարրերի մասին:

Սրտաբանը գիտական նստաշրջանում էլույթ է ունենում, և նրա խոսքը պետք է հազեցած լինի մասնագիտական բառերով. «Վերջին մեկ-երկու տասնամյակում բազմիցս քննարկվել է սրտամկանի ռեասկուլյարիզացիայի մեթոդի, այսինքն՝ աորտոկորոնար շունտավորման կամ միջմաշկային կորոնար միջամտության ընտրության հարցը» (պաշտոնական իրադրություն, մասնագիտական բառամիավորների ընտրություն): Ելույթից հետո ընկերներին է դիմում. «Հը՞, ո՞նցն էր էլույթս: Լսել լինու մ էր: Հո չձանձրացա՞ք» (ոչ պաշտոնական իրադրություն): Բժիշկը ընտանիքում է. մտերմական-հարազատական իրադրության մեջ լեզվամիջոցների ընտրության հարցում ազատ է խոսողը: Տանը՝ երեխային. «Անուշի կ ջան, արի քեզ պաչեմ, մի հատ սուրճ կեփե՛ս պապայիդ համար»: Այդ նույն բժիշկը աշխատավայրում է, ընդունում է հիվանդին և, բնականաբար, պետք է այսպիսի խոսակցություն տեղի ունենա.

-Ի՞նչ գանգատներ ունեք, պատմե՛ք: Ի՞նչ դեղեր եք գործածում: Դե լավ, հանվե՛ք, պետք է թոքերը լսեմ, եթե սիրտդ է անհանգստացնում, պետք է կարդիոգրամա անենք, որ կողմնորոշվենք՝ ինչ բուժում է հարկավոր անել

Հիվանդը, որ վարորդ է (վարորդների խումբ) փոխում է իր խոսքի կողը՝ խոսակցականից կամ ժարգոնից անցնելով գրական լեզվին:

- Բժի՛շկ, վերջերս շնչառությունս ծանրացել ա, դժվարանում եմ աստիճաններ բարձրանալիս, կարո՞ղ ա՝ սիրտս ա:

Հասարակական այլ խմբում (վարորդների) տեղի է ունենում այսպիսի հեռախոսային խոսակցություն:

- Այլո, բարև ախպե՛ր ջան, ո՞նց ես:

- Ցավդ տանեմ, ոնց ըլնեմ, որ լավ ըլնի...

- Հաց կերա՞ր:

- Հա, մտա տուն, հելա, ուշքս էթում էր սովից:

Ուստի, ինչպես նշում է ռուս լեզվաբան Ֆարմանովսկայան, «**հա-**

⁷ Մ. Աբեղյան, նշվ. աշխ., էջ 458:

դորդակցումը իրականացվում է՝ հաշվի առնելով հասարակության անդամների կարգավիճակը՝ հավասար դիրքում գտնվող, մտերիմ-օտար, ծանոթ-անծանոթ, պաշտոնական-ոչ պաշտոնական, ավագ-կրտսեր, հասարակական տարբեր դերեր (ամուսին, զավակ, մայր նն)»⁸:

Ինչպես տեսնում ենք, հաղորդակցական իրավիճակն ունի իր բաղադրիչները, որոնք առանձին-առանձին են անդրադառնում հաղորդակցման լեզվատարրերի ընտրության վրա: Կապված հասարակական-քաղաքական, տեխնոլոգիական փոփոխությունների զարգացման հետ՝ որակային փոփոխություն է կրում նաև լեզվական համակարգը՝ հանգեցնելով լեզվի տարբերակային ձևերի առկայության:

Բանալի բառեր – հաղորդակցական իրավիճակ, տեղեկույթ, բաղադրատարրեր, խոսող-խոսակից, շփման բնույթ, նպատակ, շփման կողմ, հաղորդակցման պայմաններ, հասարակական խումբ, հասարակական դեր

АНАИТ АДІЛХАНЯН – Составные элементы коммуникативной ситуации. – В статье рассматривается влияние компонентов коммуникативной ситуации на формирование речи. Это говорящий и слушатель, суть контакта, цель, условия, контактный код. Каждый из компонентов по-своему влияет на речевой процесс и результат. Определённая речь реализуется в конкретной коммуникативной ситуации. При общении значение имеют социальная роль собеседников, которая бывает постоянной или изменчивой, а также их принадлежность к социальным группам. Язык – это живой организм, он подчиняется требованиям общества и развитию информационных технологий. Поскольку язык используется различными социальными слоями, его употребление зависит от конкретной коммуникативной ситуации.

Ключевые слова: коммуникативная ситуация, информация, компоненты, говорящий, собеседник, суть, цель и код контакта, условия общения, социальная группа, социальная роль

ANAHIT ADILKHANYAN – Components of Communicative Situation. – This article reveals the impact of components of the communicative situation on the speech formulation. These are speaker and interlocutor, contact nature, objective, conditions, contact code. Each communicative component impacts the speech process and results in a unique way. A particular speech is realized in a specific communicative situation. The social role of the interlocutors, whether it is permanent or changeable, as well as their social group belonging, have great importance during the communication. The language is a living organism; it complies with the requirements of society and information technologies development. As the language is used by the different social layers, the use of language depends on the different communicative situations.

Key words: communicative situation, information, components, speaker-interlocutor, contact nature, objective, contact code, communication conditions, social group, social role

Ներկայացվել է՝ 20.11.2018, գրախոսվել է՝ 13.12.2018, ընդունվել է տպագրության՝ 07.03.2019

⁸ Фармановская Н. И. Русский речевой этикет, М., 2014, с. 71.